

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
ՀՐԱՄԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ

ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2023 թ.

N \_\_\_\_-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2014  
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի N103-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով <Քաղաքաշինության մասին> օրենքի 10.1-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ, 5.1-րդ կետերով, <Նորմատիվ իրավական ակտերի մասին> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի ՀՀՇՆ 31-03.01-2014 <Հանրակրթական նշանակության շենքեր> N 103-Ն հրամանի (այսուհետ՝ հրաման).

1) նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <Ղեկավարվելով <Քաղաքաշինության մասին> օրենքի 10.1-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ և 5.1-րդ կետերով>:

2) հավելվածի XV գլխի 146-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

:

3) հավելվածի XV գլխի 153-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1) հանրակրթական հաստատությունների շենքերի սենքերի (այդ թվում՝ վարչական, ուսումնական և սպասարկող գոտիներում տեղակայված աշխատասենյակների, դասասենյակների, խորհրդակցության սրահների, մարզասրահների, արտադրական, լաբորատոր և պահեստային հատվածամասերի) **նորմավորված օդերևութաբանական պայմաններ և ջերմաստիճանային ռեժիմ**, օդի մաքրություն՝ համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2004 թվականի օգոստոսի 4-ի N83-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-12.02.01-04 <Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում> շինարարական նորմերի և կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության պարտադիր միջոցառումների,

2) սարքավորումների և ջեռուցման, օդափոխման ու օդի լավորակման (օդորակման, սառնամատակարարման) համակարգերի աշխատանքից առաջացած աղմուկի և թրթռումների նորմավորված մակարդակները: Վթարային օդափոխման և հակաձխային պաշտպանության համակարգերի համար աշխատանքի կամ փորձարկման ժամանակ, սենքերում, որտեղ տեղադրված է այդ սարքավորումը, թույլատրելի է աղմուկ ոչ ավել 110դԲ, իսկ իմպուլսային աղմուկի դեպքում՝ ոչ ավել 125դԲ,

3) ջեռուցման, օդափոխման և օդի լավորակման (օդորակման, սառնամատակարարման) համակարգերի նորոգապիտանելիությունը,

4) ջեռուցման, օդափոխման և օդի լավորակման (օդորակման, սառնամատակարարման) համակարգերի պայթուցահրդեհաանվտանգությունը,

5) հանրակրթական հաստատությունների շենքերի սենքերում տեղակայվող ջեռուցման, օդափոխման և օդի լավորակման (օդորակման, սառնամատակարարման) սարքավորումների ու սարքերի, խողովակաշարերի և օդատարների տաք մակերևույթները, որոնք ստեղծում են գազերի, գոլորշիների, աերոզոլների կամ փոշու բոցավառման վտանգ, պետք է ջերմամեկուսացնել՝ նախատեսելով ջերմամեկուսացման կառուցվածքի մակերևույթի վրայի ջերմաստիճանը առնվազն 20%-ով ավելի նվազ, քան դրանց ինքնաբոցավառման ջերմաստիճանը: Եթե հնարավոր չէ ապահովել այդ պայմանը, ապա ջեռուցման, օդափոխման և օդի լավորակման (օդորակման, սառնամատակարարման) սարքավորումները, խողովակաշարերը և օդատարները չի թույլատրվում տեղադրել նշված սենքերում,

6) ջերմամեկուսիչ կոնստրուկցիաները պետք է նախագծել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N11-Ն հրամանով հաստատված և տեղայնացման ենթակա ՄՆԻՊ 2.04.14-88 շինարարական նորմերի,

7) ուսումնական սենքերի օդային ջեռուցման համակարգերում օդի վերաշրջանառություն չի թույլատրվում: >:

2. Սահմանել, որ սույն հրամանի պահանջները չեն տարածվում մինչև սույն հրամանն ուժի մեջ մտնելն սկսված և դեռևս չավարտված քաղաքաշինական

ծրագրերի (նախագծային և շինարարական) գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: